

Հանրահաշիվ 7. N 667, 671

N667. Եթե նշանակենք x -ով դասարանի միաժամանակ անգլերեն և գերմաներեն սովորել ցանկացողների թիվը, ապա կունենանք՝ $31 = 21 + 18 - x$ կամ $x = 8$:

N671. Լուծումք: Դիցուք A , B վերջավոր բազմությունները և նրանց հատումը ունեն համապատասխանաբար m , n և k տարրեր: Հաշվենք նրանց միավորման տարրերի թիվը հետևյալ կերպ՝ նախ հաշվենք A -ի տարրերի թիվը՝ m , ապա B -ի տարրերի թիվը: Այս երկրորդ բազմության տարրերը հաշվելիս մենք նրա k տարրերը, որոնք ընկած են նաև A -ի մեջ և արդեն հաշվել ենք, չպիտի հաշվենք: Հետևաբար միավորման տարրերի թիվը կլինի $m + n - k$: